

ՄԻՇՏ ԿՈՒԻՒՆԵՐ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԸ

ԵՐԵՒԱՆ

Հ Ե Ռ Ա Տ Ի Պ

Փ Ե Ր Ի Զ

ԵՐԵՒԱՆ («ԱՐՄԷՆՓՐԷՍ» - ՅՈՒԼԻՍ 15 / 21)

ԱԳՐԲԵՋԱՆԱԿԱՆ «ՍՈՒ 25» ՌՄԲԱԶԻԳ ՄԸ ՎԱՐ ԱՌՆՈՒԱԾ

Կոիւնները կը շարունակուին Մարտակերտի շրջանը եւ եթէ որոշ գիւղեր ետ առնուած են, ուրիշներու շուրջ, գլխաւորաբար Մաղաւուզի մասին լուրերը հակասական են: Ինչ որ հաստատ կը թուի այն է որ հայկ. ինքնապաշտպանութեան ուժերը գրաւած էին գիւղին բարձունքները եւ գիւղ չէին մտած. այնպէս որ ազրբեջանական ազրբիւրի այն լուրը ըստ որուն Ազրբիւրները ետ առած են Մաղաւուզը չի կրնար համապատասխանել իրական կացութեան: Յուլիս 21-ի երեկոյեան ալ հայկական ինքնապաշտպանական ուժերը յաջողած են վար առնել ազրբեջանական ՍՈՒ 25 ուժաւորութեան մը, որ ուժերը կը նետէր Ասկերանի եւ Զլրանի վրայ: Նախորդ օրն ալ ոչնչացուած էր ազրբեջանական զինուորական թուան մը, որ կը փորձէր գրնդակոծել Մաղաւուզի մօտ հայկական զիրքերը:

Հայկ. ինքնապաշտպանութեան ուժերը Յուլիս 21-ին յաջողած են գրաւել Զարդախաչ եւ Իմէշէթ. Գեարաւանդ բնակավայրերը: Մաղաւուզի շուրջ բուռն մարտերը կը շարունակուէին Յուլիս 23-ին ալ: Նախորդ օրուան կոիւնները կեղրոնացած էին գլխաւորաբար Հաթերքի, Մոխրաթաղի եւ Մեծչէնի շուրջ, ուր Ազրբեջանցիք բաւական բուռն յարձակումներ լրացնէին, բայց բոլորն ալ ետ մղուած են հայկ. ինքնապաշտպանութեան ուժերուն կողմէ: Հաթերք նոյնիսկ երկու հրասայլ եւ մէկ գրահակառք գրաւուած են, Մեծչէն ալ՝ մէկ հրասայլ եւ մէկ գրահակառք:

Յուլիս 21, 22-ի տուեալներու համաձայն հայկական կողմը 8 մեռեալ կար եւ 11 վիրաւոր: Ազրբիւրներու կորուստները շատ աւելի մեծ էին, 30 մեռեալի խօսք կար, բայց ստոյգ տուեալներ կը պակասին:

Յուլիս 21-ին գնդակոծուած են ձարտար, Աշան եւ Նորչէն գիւղերը: Վիրաւորներ կան եւ նիւթական վնասներ:

Հայաստանի ճակատի վրայ, համեմատական հանգարտութիւն կը տիրէ: Կապան առանձին գնդակոծումներ կան, նաեւ Եղէզնաձոր, Վայք, բայց զոհ չըկայ: Արարատի շրջանն ալ Ազրբեջանցիք զինամթերքի կուտակումներ կ'ընեն, բայց, առայժմ հանդարտ է:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆԱԽԱԳԱՀ ՊՈՒՇ կը սպառնայ գինեալ ուժի գիծել, եթէ Սատտամ Հիւսէյն շարունակէ ասպարէզ կարգալ եւ չյարգել ՄԱԿ-ի բանաձեւերը: Իրաքի իշխանութիւնները չեն ձգեր ՄԱԿ-ի քննիչներուն Գիւղաստեսութեան նախարարութիւնը խուզարկել: Կասկած կայ որ հոն կը պահուին իրաքեան զինուորական ծրարին տուեալները: ՄԱԿ-ի պատուիրակութեան ղեկավարը որոշեց տեղի տալ, կութեան «Ֆիլիքական սպառնալիք» որովհետեւ «Ֆիլիքական սպառնալիք» կար ցուցարարներուն կողմէ: ՄԱԿ-ի

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՄԻԱՅՅԱԼ -- ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ

Նիւ -- Եորք -- Սոֆիա ճամբով Երեւան հասած է Պոսթընի «Կանանց եւ Առողջապահութեան ֆոնտ»ի օգնաւոր, բժշկական ժամանակակից սարքաւորումներով եւ դեղորայքով, որ կը յանձնուին «էրբերունի» բժշկական կեդրոնին, ուր մօտ օրէն կը սկսի գործել, Հայաստանի մէջ առաջին անգամ ըլլալով, «Կանանց առողջապահութեան կեդրոնը»:

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Միացեալ -- Նահանգներու արեւմտեան թեմի Առաջնորդարանի հայկական դորակցութեան կազմակերպութիւնը մեծ օգնութիւն ցուցարեւած է աղէտեալ գօտիին եւ Հայաստանի շարք մը տնտեսութիւններուն եւ դերատեսչութիւններուն: Ան, ներկայիս Ստեփանաւանի մէջ կը կառուցանէ դպրոցի նոր շէնք եւ Երեւան համալսարան բացած է: Աշխատանքներուն ծանօթացնելու նպատակով Երեւան այցելած է կազմակերպութեան ներկայացուցիչ Վարդգէս Պարսամ:

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ

«Հայաստանի Հանրապետութիւն» թերթը բաց նամակ մը ուղղած է Մշակոյթի Հայկական ֆոնտի նախագահ Վարդգէս Պետրոսեանին, ուր կ'առաջարկուի վաղա՛մեռիկ բանաստեղծ Գոսուի ծնողքին հայ երիտասարդ բանաստեղծներու սահմանած

1992-ի մրցանակը շնորհել գիւղերի, երկրաշարժին զոհ դացած իննամեայ բանաստեղծուհի Լիլիթ Սաքոյեանին: Թիւրքը նամակին տակ հրատարակած է նաեւ Լիլիթի բանաստեղծութիւններէն:

«ԳՈՐԲԱԶՈՎ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԿԸ ՄՆԱՅ ՆԱԵԻ ՀԱՅԵՐԸ ԽԱՐԵԼՈՒ ԱՌՈՒՄՈՎ»

Հայաստան կը գտնուէր Միացեալ -- Նահանգներէն շարժարուեստագէտներու խումբ մը, որ ժապաւէն մը նկարահանած է հեռատեսիլի համար: Խումբի ղեկավար եւ ժապաւէնի հեղինակներէն Յարութ Սասունեան նաեւ իրրեւ վարիչ-տնօրէն հայկական միացեալ ֆոնտի, ունեցած է շարք մը հանդիպումներ պատկան անձերու եւ վարչապետ Գ. Յարութիւնեանի հետ, ամէնէն անհրաժեշտ ապրանքները ճշգրտու, դանոնք փոխադրելու հարցերը կարգադրելու համար: Իսկ գլխաւոր նկարահան Սթիվ Տալի արտայայտուելով աղէտի դօտի բնակչութեան կրած դժուարութիւններուն, կամքին, տոկալու յատկութիւններուն, բայց նաեւ դանդաղօրէն յառաջացող եւ երբեմն որոշ տեղեր նոյնիսկ բոլորովին լքուած վերակառուցման աշխատանքներուն մասին, ըսած է թէ Գորբազովի ամէն բան երկու տարիէն վերականգնելու խոստումները անհիմն ելան, եւ աւելցուցած է. «Գորբազով իրօք վաստակ ունի պատմութեան անցնելու, բայց ան պատմութեան կ'անցնի նաեւ Հայերը խաբելու առումով»:

Ո՞Վ ԿԱՐԺԱՆԱՆԱՅ «ՄԵԾ ՄՐՏԱՆԱԿ»ԻՆ

Սփիւռքահայութեան հետ կապի Կոմիտէն եւ Պելժիոյ «Ամատու» հայկ. Հիմնադրամը մինչեւ 16 տարեկան դաշնա-

փորձագէտներէն մէկը, արդարեւ, յարձակման ենթարկուած էր:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՄՈՂԴՈՎԱՅԻ միջեւ ստորագրուած համաձայնագրերը, Ելցինի եւ Սնեղիւրի կողմէ չբաւեց վերջ տալու համար այն բախտումներուն, որոնք ծայր տուած են ուսասխօսներու եւ Մոլդաւներու միջեւ, Բենդեսիի մօտ: Մոլդաւի Պաշտպանութեան նախարարութեան համաձայն, 3 մեռեալ կայ եւ 15 վիրաւոր: Ստորագրուած համաձայնութիւնը կը նախատեսէ որ «Դնեստրի ձախ սփիւռնակչութիւնը կրնայ ինք որոշել իր ապագան, այս պարագային եւ Մոլդովա եւ Ռումանիա իրարու մօտենան կամ ձուլուին»: Ասիկա ուսասխօսներու նուազագոյն պահանջներէն էր, որովհետեւ կը մերժէն մաս կազմել «մեծ Ռումանիոյ»:

ԴԱՏԱՒՈՐ ՊՈՐՍԵԼԻՆՈՅԻ սպանութիւնէն ետք, մթնոլորտը միշտ լարուած է Սիլիլիա: Կը պարզուի որ Պորսելինօ տեղեկացած էր քանի մը օր առաջ որ մաֆիային համար մեծաքանակ պայթուցիկ հասած էր եւ ինք ալ ըսած էր՝ «ինձի

համար է»: Այս պայմաններու տակ, քիչ մը զարմանալի կը թուի որ մօրը բնակարանէն չեն հեռացուած կառքերը: Հոն դացած ատենն է, որ դատաւորը զոհ դնաց թակարդ -- կառքի մը: Երկու դատաւորներէն ետք, երրորդ քաջ մը կը մնայ՝ դատաւոր ձիւղեփփիէ Այալա, որ կը յայտարարէ նոյնիսկ («Ֆիկառօ»ի հարցազրոյցը՝ Յուլիս 23) «Առանց վարանելու պիտի ընդունէի Ներքին նախարարութիւնը»: Զի ծածկեր նաեւ թէ «խտալակալ Պետութիւնը ծառ մըն է, որու որոշ ճիւղերը փտած են»:

ՄԱՐՏԻՆԻ մօտ հինգ թուրք ոստիկաններ եւ Քիւրտ մը մեռած են, Քիւրտերու լարած թակարդ մը իյնալով:

ՄԻԱՅՅԱԼ -- ՆԱՀԱՆԳՆԵՐԷՐՈՒ իշխանութիւնները, երկրորդ տարին ըլլալով «Կրին քար»ի (կանաչ թուրք կամ Ամբիկա սպրիտը արտօնագիր) վիճակահանութիւն մը պիտի կազմակերպեն, 40 հազար օտարականներու արտօնութիւն տայ մշտական կերպով Ամերիկայ: